

Երեքշաբթի  
14 մարտի 2023թ.  
№ 5 (593)

ՀԻՍՏԱԿԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:  
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468  
2 3 0 0 5 >  
9 771829 346006

Նորից եկել հին ցավերն են մեզ խոցում  
(Խույ տևեցո՞ւմ եմ լսում հեռու Դեր-Չորից):  
Եվ մեզ վրա մահն իր ուժերն է փորձում,  
Եվ դողում են մահվան ձեռքերը նորից:

Մենք դեռ հազար հոգեառք ենք մերժելու  
(Զեռու կանչն է լսել Դավիթը հորում):  
Թե մենե՛կ կա, հայերեն ենք մենե՛կու,  
հնչպես մաքուր ցորենի հունդը հողում:

Համո Սահյան

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Սեպտեմբերի ագրեսիայի  
ժամանակ Հայաստանն ունեցել  
է 225 զոհ, օկուպացվել է ՀՀ  
տարածքի ավելի քան 150  
քառակուսի կմ-ն

Մենք ականատես եղանք այսօրվա  
մարտահրավերների առաջին ծիլե-  
րին և մեր տարածաշրջանում եվ-  
րոպական անվտանգային ճարտարապե-  
տության փլուզմանը դեռևս 2020 թվականին,  
երբ Ադրբեջանը պատերազմ սանձազերծեց  
Լեռնային Ղարաբաղի դեմ: Այս մասին Գեր-  
մանիայի արտաքին հարաբերությունների  
խորհրդում հայտարարել է ՀՀ վարչապետ Նի-  
կոլ Փաշինյանը: Նա նաև նշել է. «2020 թվա-  
կանի Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարա-  
րության ստորագրումից հետո Ադրբեջանը ոչ  
միայն չհրաժարվեց իր ռազմատենչ և սպառ-  
նալիքների բաղաբաղակալությունից, այլև Նոր  
ագրեսիա իրականացրեց՝ այս անգամ Հա-  
յաստանի Հանրապետության ինքնիշխան  
տարածքների դեմ 2021 թվականի մայիսին,  
2021 թվականի նոյեմբերին և 2022 թվականի  
սեպտեմբերին:

Վերջին ագրեսիայի ժամանակ՝ 2022 թվա-  
կանի սեպտեմբերի 13-14-ը, Ադրբեջանը ձեռ-  
նարկեց լայնածավալ ռազմական հարձակում՝  
թիրախավորելով Հայաստանի ռազմական  
և բաղաբաղակալ ենթակառուցվածքները՝  
օգտագործելով ծանր հրետանի, հրթիռային  
համակարգեր և անօդաչու սարքեր: Դրա հետ-  
ևանքով՝ հայկական կողմն ունեցել է 225 զոհ,  
այդ թվում՝ 3 խաղաղ բնակիչ, օկուպացվել է  
Հայաստանի ինքնիշխան տարածքների ավելի  
քան 150 քառակուսի կիլոմետրը:

Այսօր ես չեմ ցանկանա խորանալ 2020,  
2021, 2022 թվականների ագրեսիաների ման-  
րամասների մեջ, սակայն անհնար է անտե-  
սել գերի ընկած կամ արդեն մահացած հայ  
զինծառայողների (այդ թվում՝ կին զինծա-  
ռայողների) խոշտանգումների բազմաթիվ  
դեպքերը, անդամահատման փաստերը և  
Ադրբեջանական զինուժի այլ վայրագություն-  
ները: Տարածված սարսափելի տեսանկյոթերը,  
որտեղ ադրբեջանցի զինվորականները «ԻՊ-  
ի ոճով» ռազմական հանցագործություններ  
են գործում՝ մահապատժի ենթարկելով հայ  
ռազմագրեհների, պետք է ճանաչվեն և հաս-  
ցեագրվեն միջազգային հանրության կողմից:  
Մեկ այլ խնդիր է Ադրբեջանի կողմից Սիրիայից  
վարձկանների ներգրավումը»:

## ՎԵՐՍՏԻՆ ՀԻՇԵՆՔ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԻ ՊԱՏՎԻՐԱՆ-ՀՐԱՄԱՆԸ՝ «Ոչ մի տեղ առանց Սյունիքի ու Արցախի. առանց աշխարհագրական Հայաստանի այդ հզոր ողնաշարի մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող»

### Օխտարի դպրոցականներին և ուսուցիչներին տեղափոխող ավտոբուսի վթարը բազմաթիվ հարցերի տեղիք է տվել

Մարտի 10-ին Կապան-Առաջածոր ավ-  
տոճանապարհին՝ Առաջածոր գյուղի  
վարչական տարածքում, դպրոցա-  
կանների տեղափոխող ավտոբուսը, դեռևս  
անհայտ հանգամանքներում, դուրս է եկել  
երթևեկելի գոտուց և գլխավոր հայտնվել գե-  
տում: Վթարի հետևանքով կան բազմաթիվ  
վիրավորներ, այդ թվում՝ դպրոցում աշխա-  
տող 9 ուսուցիչ, 2 մաթրոնի և աշակերտ-  
ներ: Նրանցից մեկը՝ 1970 թ. ծնված Թամարա  
Դավթյանը, մահացել է:

Օպերատիվորեն ժամանել են ՀՀ ներքին  
գործերի նախարարության Փրկարար ծա-  
ռայության Կապանի հրշեջ-փրկարարական  
շվաբաթի 1 մարտական հաշվարկ: Օպե-  
րատիվորեն ժամանել են նաև ՀՀ ՆԳՆ Ոստի-  
կանության ճանապարհային ոստիկանության

2-րդ սպայական գումարտակի 6-րդ վաշտի  
2-րդ դասակի ծառայողները՝ վաշտի հրամա-  
նատար Վաչե Ալավերդյանի, դասակի հրամա-  
նատար Արմեն Սարգսյանի գլխավորությամբ:  
Ժամանել են նաև Ոստիկանության Կապանի  
բաժնի օպերատիվ խումբն ու Կապանի հի-  
վանդանոցի շտաբօգնության բրիգադները:  
Մոտ 15-ից ավելի վիրավորների դուրս են բե-  
րել և պատգարակով մոտեցրել շտաբօգնու-  
թյան ավտոմեքենաներին:

Դեպքի վայր են ժամանել Հայաստա-  
նի բնչական կոմիտեի Սյունիքի մարզային  
բնչական վարչության խումբը՝ վարչու-  
թյան պետի և հատկապես կարևոր գործերով  
ավագ բնիչների գլխավորությամբ:

\*\*\*

ՀՀ կրթության, գիտության, մշակույ-




Թի և սպորտի նախարար Ժաննա Անդ-  
րեասյանը մարտի 11-ին այցելել է Կապան՝  
նախօրին ավտոբուսից տուժած դպրոցա-  
կաններին և ուսուցիչներին տեսակցելու հա-  
մար:

Տեղում նախարարին ներկայացվել է իրա-  
վիճակը, այնուհետև ժամանա Անդրեաս-  
յանն այցելել է Կապանի բժշկական կենտրոն,  
որտեղ բուժօգնություն են ստանում վթարից  
տուժածները:

Նախարարը գրուցել է երեխաների և ու-  
սուցիչների հետ՝ նրանց մարդկային շուտա-  
փույթ ապաքինում: Այցի արդյունքում ՀՀ  
ԿԳՄՍ նախարարը մասնավորապես նշել է՝  
«Սյունիքի մարզում նախօրին տեղի ունե-  
ցած ավտոբուսի իսկապես ողբերգություն  
է: Պետք է կատարվի վերլուծություն, թե ին-  
չու է նման իրավիճակ ստեղծվել: Իրավապահ  
մարմինները, իհարկե, իրենց գործն անում  
են, բնութագրում են ընթացքի մեջ է, բայց ԿԳՄՍ  
նախարարությունը, որպես կրթության ոլոր-  
տի լիազոր մարմին, պետք է հատուկ վերլու-  
ծություն իրականացնի, թե երեխաների տե-  
ղափոխման գործընթացը, ընդհանրապես,  
ինչպես է կազմակերպվում: Մեր ուշադրու-  
թյունն ու զգոնությունը պետք է բազմապա-  
տիկ մեծ լինեն, երբ գործ ունենք երեխաների  
անվտանգության հետ: Համապատասխան  
չափորոշիչներն ու պահանջները պետք է շատ  
հստակ լինեն: Վերահսկողության մեխանիզմ-  
ները նույնպես կարգավորված և խիստ պետք  
է լինեն, երբ խոսում ենք երեխաների տեղա-  
փոխող տրանսպորտային միջոցների մասին»:

Աղբբեջանը մեծ գին է վճարելու, եթե փորձի գնեքով կամ այլ ճանապարհով ստիպել Արցախը ներառել իր կազմում

Արցախյան հարցի լուծման միակ տարբերակն Աղբբեջանի հետ շփման բանաձև գտնելը միայն որպես հարևանների. այլ ճանապարհ չի կարող: Այս մասին մարտի 11-ին՝ «Ապագա Հայկականը» համաժողովի ժամանակ, հայտարարեց Արցախի նախկին պետախարար Ռուբեն Վարդանյանը:



## Միասնական ճակատ ձևավորել Արցախի միջազգային ճանաչման օրակարգի շուրջ

«Մենք մեզ չենք տեսնում Աղբբեջանի կազմում, և չեմ էլ հասկանում ինտեգրացիա բառը, որովհետև դրա մեջ իմաստ կա, որ ինչ-որ ժամանակ մենք եղել ենք իրենց մասը ու նորից պետք է հետ բերեն: Այն ժամանակ լիովին ուրիշ ժամանակ էր՝ այսօրվանի հետ կապ չունեցող: Միակ ճանապարհը պայքարելն է, ինչպես օրինակ Կուբան պայքարեց ԱՄՆ-ի դեմ: Մենք 35 տարի պայքարել ենք և պետք է պատրաստ լինենք ևս այդքան պայքարելու: Մենք անկախ պետություն ենք, չենք ենթարկվելու Աղբբեջանի պահանջներին: Աղբբեջանը մեծ գին է վճարելու, եթե փորձի գնեքով կամ այլ ճանապարհով ստիպել Արցախը ներառել իր կազմում», – ասաց Վարդանյանը:

Ռուբեն Վարդանյանի խոսքով՝ չնայած բոլոր դժվարություններին՝ Արցախում կյանքը նույն տեմպով շարունակվում է: Մարդիկ, անկախ ամեն ինչից, փորձում են պահպանել ոգին, չպարտվելու զգացողությունը:

«Արցախցիները շատ դիմացկուն են: 1990-ական թվականներին, երբ շատ ավելի վատ պայմաններ էին, միևնույն է, երեխաները դպրոց էին գնում վերադառնալու և ցուրտ սենյակներում սովորում էին: Դեպի գիտելիք ու ուսում պահանջն Արցախում այսօր էլ շատ ուժեղ է: Այս օրերը ցույց տվեցին, որ Արցախի խնդիրը ոչ միայն արցախցիներինն է, այլև ամբողջ հայությանը, և անգամ այն մարդկանց, որոնք հայ չեն, սակայն մեզ աջակցում են: Արցախի մարտահրավերը բոլորինս է, և պետք չէ ասել՝ արցախցի, լիբանանցի, երևանցի, որովհետև այժմ բոլորս ենք արցախցի», – ընդգծեց Ռուբեն Վարդանյանը:

«Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հրամայականը» գիտագործնական համաժողովի կազմակերպիչները վստահեցնում են, որ Արցախի ճանաչման աջակցելը՝ ՀՀ-ին վերամիավորվելու հեռանկարով, ՀՀ իշխանությունների սահմանադրական պարտականությունն է:

«Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հրամայականը» գիտագործնական համաժողովի կազմակերպիչները կոչ են անում բոլորին՝ միասնական ճակատ ձևավորել Արցախի միջազգային ճանաչման օրակարգի շուրջ: Փետրվարի 28-ին հրավիրված ասուլիսի ժամանակ «Համախմբում» շարժման անդամ, հասարակական-քաղաքական գործիչ Ավետիք Զալաթյանը ներկայացրեց համաժողովի հայտարարությունը:

«Մենք վճռական ենք բոլոր միջոցներով ՀՀ իշխանություններին հետ պահել Արցախի հարցում կործանարար քաղաքականությունից: Պահանջում ենք իշխանություններից՝ զերծ մնալ Արցախը որևէ կերպ Աղբբեջանի կազմում ճանաչելու ցանկացած փաստաթուղթ ստորագրելուց», – ասված է հայտարարության մեջ:

Լշվում է նաև, որ Արցախը երբեք չի եղել անկախ Աղբբեջանի կազմում, ավելին՝ Արցախի Հանրապետությունը կայացած պետություն է: Միջազգային հանրությունը երբեք իրավաբանական դիրքորոշում չի հայտնել այն մասին, թե Արցախը պետք է ներառել Աղբբեջանի կազմում: Իսկ 2007-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն առաջարկել են, և 2009-ին Հայաստանի ու Աղբբեջանի կողմից որպես բանակցության հիմք են ընդունվել մարդկային սկզբունքները: Դրանցով, տարածքային ամբողջականության հետ միասին, որպես բանակցային հիմք հաստատվել է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Հայտարարության մեջ ասվում է նաև, որ Արցախի հարցը փակված չէ: Միջազգային դերակատարների համար ընդունելի կլինեն նաև ՀՀ կողմից ներկայացվող բանակցային պայմանները՝ Շուշի և Հադրուտի դեֆուպացիա, փախստականների վերադարձ, միջևորդային առկա ձևաչափի վերականգնում կամ նոր ձևաչափի ստեղծում, որոնք կչեզոք-

բացեն բանակցային գործընթացը նոր կապիտուլյացիոն ակտով դադարեցնելու Աղբբեջանի նկրտումները:

Բացի այդ, ըստ հայտարարության, ՀՀ-ն հնարավորություն ունի միջազգային դատական ատյաններում բազմաթիվ գործերով Աղբբեջանին պատասխանատվության կանչել կատարած ռազմական, ցեղասպան հանցագործությունների համար: Դրանով էլ ավելի կամրապնդվի սեփական բանակցային դիրքերը: Միաժամանակ հայկական սփյուռքն էլ չիրացված լրբբինգային մեծ հնարավորություն ունի, սակայն ՀՀ իշխանությունների ուղեգրով գրկում է նրանց անհրաժեշտ արդյունավետությունից:

«Արցախի ճանաչման աջակցելը՝ ՀՀ-ին վերամիավորվելու հեռանկարով, ՀՀ իշխանությունների սահմանադրական պարտականությունն է: Միևնույն ժամանակ հրաժարվելու ոչ միայն անօրինական է, այլ նաև դավաճանություն, որն անխուսափելիորեն հանգեցնելու է իրավական և քաղաքացիական պատասխանատվության: Արցախի միջազգային ճանաչման պայքարը հայ ժողովրդի առանցքային առաքելությունն է՝ այն պետք է դուրս բերվի ներքաղաքական հակասությունների և աշխարհաքաղաքական նախընտրությունների ստանձնած մեր դեկլարները պետք է գիտակցեն, որ չի կարելի մեր ազգա-

բացնել բանակցային գործընթացը նոր կապիտուլյացիոն ակտով դադարեցնելու Աղբբեջանի նկրտումները:

«Արցախի ճանաչման աջակցելը՝ ՀՀ-ին վերամիավորվելու հեռանկարով, ՀՀ իշխանությունների սահմանադրական պարտականությունն է: Միևնույն ժամանակ հրաժարվելու ոչ միայն անօրինական է, այլ նաև դավաճանություն, որն անխուսափելիորեն հանգեցնելու է իրավական և քաղաքացիական պատասխանատվության: Արցախի միջազգային ճանաչման պայքարը հայ ժողովրդի առանցքային առաքելությունն է՝ այն պետք է դուրս բերվի ներքաղաքական հակասությունների և աշխարհաքաղաքական նախընտրությունների ստանձնած մեր դեկլարները պետք է գիտակցեն, որ չի կարելի մեր ազգա-

բացնել բանակցային գործընթացը նոր կապիտուլյացիոն ակտով դադարեցնելու Աղբբեջանի նկրտումները:

Հիշեցնենք, որ փետրվարի 24-ին Մատենադարանում անցկացվեց «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հրամայականը» գիտագործնական համաժողովը:

## Մեր անվտանգությունը հնարավոր է ապահովել հայրենիքը պաշտպանելու մեր վճռականությամբ

Արցախում Աղբբեջանի դիվերսիոն գործողությունների հետևանքով ունենք երեք գոհ ու վիրավոր: Փաստացի, Արցախը շրջափակման մեջ պահելով, զագի ու էլեկտրաէներգիայի խափանումներով արցախցիներին ճնշելու ծախսով փորձերից հետո Աղբբեջանն անցավ ռազմական ճանապարհով խնդիրների լուծման փորձերին:

Ես բազմիցս եմ նշել, որ իրենց առաջարկած «ինտեգրացիան» մեզ համար չի կարող ընդունելի լինել, քանի որ դա նշանակում է, որ Արցախում հայ չի կարող ապրել: Այլևայնպես ռեժիմը ամեն օր ապացուցում է, որ իր նպա-

տակը մեզ այստեղից հեռացնելն է, մեզ մեր հայրենիքից զրկելն է: Նրանք այդ նպատակին հասնելու համար ունակ են դիմել ցանկացած քայլի: Այսօրվա դեպքերը դրա վառ ապացույցն են: Կարևոր է, որ Սպարապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան օրը վերհիշենք նրա խոսքերն ուղղված մեզ: Դրանք ավելի արդիական են այսօր, քան երբևէ: Նա ասել է. «Ես ատում եմ մազապուրծ բառը, ես չեմ ուզում մազապուրծ լինել, ես չեմ ուզում ևս մեկ անգամ իմ հայրենակիցներին, հարազատներին սրի տան... Եվ, փառք Աստծո, մեր ժողովուրդն իր մեջ այդ զոհի հոգեբանությունը հաղթահարեց: Այդ իմաստով

մենք ես պատերազմը պիտի շատ հարգենք, ընդհանրապես դարաբարոյան ազատամարտը, Ղարաբաղի ժողովրդին մենք պիտի շատ հարգենք: Այս ազատամարտը մեզ ստիպեց, որ ինքներս մեզ հարգենք: Սա մեր պատերազմն է: Սիրենք թե չսիրենք, պատերազմն ոչ ոք չի սիրում, բայց պարտավոր ենք հարգել, առանց դրա մենք հեռանկար չենք ունենա...»:

Սրանք իսկական առաջնորդի խոսքեր են, ում համար իր ժողովրդի արժանապատիվ կյանքը վեր է ամեն ինչից: Պատասխանատվություն ստանձնած մեր դեկլարները պետք է գիտակցեն, որ չի կարելի մեր ազգա-

յին արժանապատվության հաշվին հարմարվել: Պայքարի ու դիմադրության այլընտրանքը մազապուրծ ու հայրենագուրկ դառնալն է, իսկ դա մենք թույլ տալ չենք կարող: Ընդհակառակը, մեր գործողություններով պիտի կարողանանք ցույց տալ թշնամուն, որ իրենց այդ մտադրությունները շատ ծանր ավարտ են ունենալու հենց իրենց համար: Իսկ մենք վերջապես պիտի հասկանանք, որ մեր անվտանգությունը հնարավոր է ապահովել հայրենիքը պաշտպանելու մեր վճռականությամբ: Եվ մենք մեր կամքով շատ բան կարող ենք փոխել:

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# Արցախի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների հայտարարությունը

Մի քանի օրից կլուսա Արցախի Հանրապետության 120 հազար բնակչությանը Ադրբեջանի կողմից շրջափակելու 100 օրը: Արհամարհելով Արցախի ապաշրջափակման վերաբերյալ Հազարյան միջազգային դատարանի որոշումը՝ Ադրբեջանի ղեկավարությունն ուժի սպառնալիքով և կիրառմամբ շարունակում է Արցախը հայաթափելու քաղաքական ուղեգիծը:

Արցախի Հանրապետությունն իրեն բռնակցելու մտադրության մեջ Ադրբեջանը չի խորշում հակամարտության միջոցներից և ահաբեկչական գործողություններից: Բնական գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման խափանումները, խաղաղ բնակչության ահաբեկումն ու ազատ տեղաշարժի սահմանափակումները, իսկ վերջերս էլ՝ մարտի 5-ին, իրենց ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ ոստիկանների գնդակահարելու փաստը գալիս են ապացուցելու, որ նման պայմաններում անընդունելի են ուղիղ երկխոսության մասին խոսակցությունները:

Միևնույն ժամանակ, համոզված ենք, որ դարաբաղյան հակամարտությունը, որպես միջազգային օրակարգի հարց, պետք է լուծվի բնակչությունների միջոցով համապատասխան միջազգային կառույցների միջնորդությամբ ու երաշխիքներով, մասնավորապես, այդպիսի լիազորությամբ օժտված Միևնույն խմբի համահայտարար երկրների ներգրավմամբ:

Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը քարոզչական տարբեր հնարքներով ապատեղեկացնում է սեփական հանրությանն ու միջազգային կառույցներին՝ նպատակ ունենալով Արցախի ժողովրդի դեմ կիրառվող հումանիտար ճշումների և ահաբեկումների պայմաններում պատրանք ստեղծել «խաղաղության դարաշրջանի» մասին:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները, արտահայտելով ժողովրդի կամքն ու դիրքորոշումը, պահանջում են Հայաստանի Հանրապետության իշխանություններից հավատարիմ մնալ ՀՀ Գերագույն խորհրդի 1992թ. հուլիսի 8-ի որոշմանը և կասկածի տակ չդնել Արցախի ժո-



ղովրդի ինքնորոշման իրավունքը:

Արցախի խորհրդարանի բոլոր խմբակցությունները վերահաստատում են իրենց հավատարմությունը մեր ժողովրդի կամքն արտահայտող հիմնարար փաստաթղթերին և շարունակելու են առաջնորդվել դրանցից բխող գաղափարներով և սկզբունքներով:

- «Ազատ հայրենիք- ՔՄԴ» խմբակցություն
- «Միասնական հայրենիք» խմբակցություն
- «Արդարություն» խմբակցություն
- «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցություն
- «Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցություն

13 ՄԱՐՏԻ, 2023Թ. Ե. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Հանդիպումներ կարող են լինել միայն ՌԴ խաղաղապահների միջնորդությամբ՝ հումանիտար, ենթակառուցվածքային ու տեխնիկական հարցերի շուրջ

Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը հայտարարություն է տարածել՝ ի պատասխան Ադրբեջանի և Արցախի ներկայացուցիչների միջև հանդիպում անցկացնելու մասին Ադրբեջանի Հանրապետության նախագահի աշխատակազմի առաջարկի՝ հայտնելով, որ Արցախի Հանրապետությունը հավատարիմ է նախկինում հայտնած իր դիրքորոշմանն առ այն, որ նման հանդիպումներ կարող են տեղի ունենալ ՌԴ խաղաղապահների միջնորդությամբ, նույն վայրում՝ ինչպես սույն թվականի մարտի 1-ին, հումանիտար, ենթակառուցվածքային, տեխնիկական հարցերի շուրջ, առանց դրանց անհարկի քաղաքականացման: ԱԳ նախարարության հայտարարության մեջ նշված է.

«Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ Լաչինի միջանցքի փակ լինելն ու հումանիտար ճգնաժամի շարունակումն անընդունելի են և ոչ մի կերպ չեն նպաստում բնակչության բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը: Համոզված ենք, որ Ադրբեջանը պետք է պատշաճ կերպով իրականացնի ինչպես 2020 թվականի Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունները, այնպես էլ Արդարադատության միջազգային դատարանի որոշման պահանջները՝ գերծ մնալով ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառումից և միակողմանի, առավելապաշտական մոտեցումներից: Այդ դեպքում միայն նպաստավոր պայմաններ կստեղծվեն հետագա բնակարկումների համար:

Ինչ վերաբերում է ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման քաղաքական հարցերին, ապա հիշեցնենք, որ Արցախը հավատարիմ է հակամարտության համապարփակ կարգավորմանն ուղղված բնակչություններին, որոնք պետք է տեղի ունենան միջազգայնորեն ճանաչված և հաստատված ձևաչափով՝ կողմերի հավասար իրավունքների և ստանձնած պարտավորությունների կատարման միջազգային երաշխիքների առկայության պայմաններում», – ասված է հայտարարության մեջ:



# Ավանդ, այլևս մեզ հետ չէ Կարդան Հակոբյանը

Փետրվարի 28-ի վաղ առավոտյան Ստեփանակերտում մահացել է հայ մեծանուն բանաստեղծ և գիտնական, Սյունյաց աշխարհի մեծ բարեկամ Կարդան Հակոբյանը:

Ցավակցում ենք Կարդան Հակոբյանի հարազատներին ու մերձավորներին, նաև Արցախի և Սյունիքի հասարակությանը:

Օրեր առաջ էր՝ 2022 թ. դեկտեմբերի 27-ին, Կարդան Հակոբյանը հարցազրույց էր տվել «Սյունյաց երկրին»:

\*\*\*


Կարդան (Սլավիկ) Սարգսի Հակոբյանը ծնվել է 1948 թ. մայիսի 21-ին Հարություն շրջանի Արիագետիկ գյուղում: 1969 թ. ավարտել է Բաբվի մանկավարժական ինստիտուտը: 1969-1983 թթ. աշխատել է Ստեփանակերտի «Սովետական Ղարաբաղ» օրաթերթում, 1976-1983 թթ.՝ գլխավոր խմբագրի տեղակալ: 1983-1991 թթ.՝ գրողների միության Լեռնային Ղարաբաղի մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար, 1991 թ.՝ ԼՂՀ գրողների միության նախագահ, միաժամանակ՝ միության պաշտոնաթերթ «Երկիր լույսի» գլխավոր խմբագիր: 1982 թվականից Հայաստանի գրողների միության անդամ է: Կարդան անունը կնքել է Հովհաննես Հիրագը: Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը և Հայաստանի պետական և ժողովրդական թատրոնները բեմադրել են Հակոբյանի «Հայելիներ» (1979) և «Զո սերը քո տունն է» (1981), «Ես հրաժարվում եմ ինձանից», «Արցախյան բալլադ» պիեսները:

Հակոբյանի քնարական բանաստեղծությունների («Մեղեդիներ», 1969, «Շանթահար կաղնի», 1974, «Մայրսումը և լույսը», 1975, «Անմարտիկ-անմեկնելի», 1981, «Վարկա աչքերով», 1987, «Արցախա ծովի», 1989, «Ամառասի գանգերը», 1989 և այլ ժողովածուներ) հիմնական թեման ժամանակակից մարդու խոհերն են, կարոտի, սիրո ապրումները:

Հակոբյանը հիմնադրել է խմբագրել է «Արցախ» (1989) երկամսյա և «Պղնձ-Պողի» (1991) երգիծական հանդեսները: Հեղինակել է ԼՂՀ պետական օրհներգը: Ստեղծագործությունները տպագրվել են ռուսերեն, ուկրաիներեն, վրացերեն, անգլերեն և այլ լեզուներով:

Պարգևները՝ ԼՂՀ «Մեսրոպ Մաշտոց» շքանշան, «Վաչագան Բարեպաշտ» մեդալ, «Մայրական երախտագիտություն» Արցախի բաշտորդիներին՝ մեդալ, Ֆրիտյոֆ Նանսենի մեդալ, Գարեգին Նժդեհի մեդալ, Մ. Շուրիտովի մեդալ, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ կոչում, ՀԳՄ «Գրական թերթի» մրցանակ, Ավետիս Իսահակյանի անվան մրցանակ, ՀՀ նախագահի մրցանակ, Համահայկական «Վահագն» մրցանակ, Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ, Հայաստանի մշակույթի նախարարության ոսկե մեդալ:

# Շուռնուխում և Որոտանում տուն կորցրածներն աջակցություն կստանան՝ մինչև բնակելի թաղամասի կառուցումը



Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելու պատճառով Սյունիքի մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում հաշվառված կամ այդ հասցեում փաստացի բնակված և իրենց տները կորցրած քաղաքացիներին Կառավարությունը կշարունակի 68 000 դրամ աջակցություն տրամադրել և 8 ամիս:

Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2021թ. փետրվարից մինչև 2022-ի նոյեմբերը ներառյալ շահառուներին տրամադրվել է միանվագ 300 000 դրամ և ամսական 68 000 դրամ:

Նախագծի հիմնավորմամբ՝ տները կորցրած անձանց համար Շուռնուխում կառուցվող բնակելի թաղամասը շահագործման

հանձնելու ժամկետը երկարաձգվել է Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2023թ. հունիսի 30-ը, և կառավարությունը որոշել է բնակելի անշարժ գույքը կորցրած քաղաքացիներին օգնություն տրամադրել մինչև 2023 թ. հուլիսը ներառյալ:

Բնակելի թաղամասի կառուցման մասին հայտարարվել էր դեռևս 2021թ.-ին: Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Դուրյանը հայտնել էր, որ մինչև 2021-ի տարեվերջ կավարտվի տների կառուցման և բնակեցման գործընթացը:

Քաղաքաշինության կոմիտեի՝ մարտին տարածած հաղորդագրության համաձայն՝ թաղամասում 13 տան շինարարությունը պետք է ավարտվեր 2022-ի հունիսին, իսկ ամբողջ թաղամասի կառուցումը՝ նոյեմբերին:

2022 թ. օգոստոսի 23-ի հաղորդագրությամբ կոմիտեն հայտնել էր, որ բնակելի 13 տուն ներառող թաղամասի 9 տան կառուցման աշխատանքները մոտենում են ավարտին, իսկ 4-ինն ընթացքի մեջ են:

Աջակցության ծրագրի որոշման նախագծում նշված է, որ աշխատանքները պետք է ավարտվեին 2022թ. սեպտեմբերի 30-ին, սակայն սահմանված ժամկետում պայմանագրով նախատեսված աշխատանքներն ամբողջ ծավալով չեն իրականացվել, և անհրաժեշտ է այն երկարաձգել մինչև հունիս:

»

»



# Խոսք ընկերոջս՝ Կամո Մովսիսյանի հորեղանի առթիվ



Կեց տասնամյակ է անցել սեպտեմբերյան այն երանելի օրից, երբ Գորիսի թիվ 2 միջնակարգ դպրոցի նորակազմ 9-րդ դասարանում ծանոթացա Կոռնիձոր գյուղից եկած Կամո Մովսիսյանի հետ: Նոր միջավայրում առաջին օրերը, ժամերը, պատասխանները գրատախտակի մոտ, ճշտում են յուրաքանչյուրի «ով» լինելը: Ընդգծվեցին նաև Կամո Մովսիսյանի իմացությունն ու զարգացվածությունը. նկատելի էին տրված հանձնարարությունները լրիվ կատարելու, գիտելիքներ ձեռք բերելու նկատմամբ նրա լրջախոհ մոտեցումը, պատասխանատվությունը՝ շրջապատի և ընտանիքի հանդեպ: Չնայած լրացուցիչ զբաղվածությանը (ընկերներով ապրում էին հեռու բնակավայրերից եկածները համար սեյսակ-հանրակացարանում, միայն շաբաթ օրերն էին տուն գնում և կիրակի՝ վերադառնում), չէր զանում նաև ակտիվ մասնակցություն ունենալ դպրոցի հասարակական կյանքին: 1966 թ. նա գերազանցությամբ ավարտեց դպրոցը (11-րդ դասարան), 1972-ին դարձավ գերազանցությամբ՝ Հայկական պետական մանկավարժական ինստիտուտը՝ «Ֆիզիկա» մասնագիտությամբ և աշխատանքի անցավ Նույն բուհի Գորիսի մասնաճյուղի ֆիզիկայի ամբիոնում:

1973-1974 թթ. խորհրդային բանակում ծառայելուց և զորացրվելուց հետո շարունակել է գիտամանկավարժական գործունեությունը: Իբրև հայցվոր-դիսերտանտ՝ գիտական հետազոտություններն իրականացրել և թեկնածուական թեզը պաշտպանել է ԽՍՀՄ ԳԱ Լենինգրադի բարձրմոլեկուլային միացությունների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում, նրան շնորհվել է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (1984 թ.): 1986-ին տրվել է դոցենտի կոչում:

Իմ ձեռքին Կամո Հարությունի Մովսիսյանի գիտամանկավարժական գործունեությունը ներկայացնող անձնական գործի փաթեթն է: 2002-2006 թթ. մրցույթով ընտրվել է ֆիզիկայի և ընդհանուր տեխնիկական առարկաների (ԸՏԱ) ամբիոնի վարիչի պաշտոնում, 2006-2010 թթ.՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) Գորիսի մասնաճյուղի ղեկավարման վարիչ: 2010-2016 թթ. ընտրվել է Գորիսի պետական համալսարանի (ԳՊՀ) բնագիտական մասնագիտությունների ֆակուլտետի ղեկանի պաշտոնում: 2016 թ.-ից կրկին կատարել է ԳՊՀ-ի ֆիզիկայի ամբիոնի վարիչի պարտականությունները, 2020-ից՝ ֆիզիկայի կրթական ծրագրերի ղեկավարն է:

Գիտական մանկավարժ Կ. Մովսիսյանի հետաքրքրությունների և դասավանդած առարկաների շրջանակն ընդհանուր ֆիզիկայի բուհական դասընթացում լայն ու բազմաճյուղ է՝ տեսական հիմնախնդիրներից մինչև ուսուցման մեթոդիկա: Հեղինակ է ավելի քան 50 գիտական հոդվածի, 10-ից ավելի լաբորատոր ուղեցույցի, երեք ուսումնամեթոդական ձեռնարկի և մեթոդամանկավարժական ու հրատարակախոսական հոդվածների: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել ՀՀ տարբեր բուհերում դասախոսների ու ասպիրանտների համար կազմակերպված ամենամյա գիտական նստաշրջաններին, Խորհրդային Միության տարբեր գիտական կենտրոններում անցկացված միջազգային գիտական կոնֆերանսներին, հանդես է եկել զեկնուցումներով ու դասախոսություններով:

Ֆիզիկոս գիտնականն ունի նաև ռետիկանտիվիկական և կաշվի արդյունաբերության **Շարունակությունը՝ էջ 7**

# ՀՀ բնչական կոմիտեի նախագահի տեղակալն ընդունել է Կապանում Իրանի հյուպատոսին

Ճանաչողական այցով ՀՀ բնչական կոմիտեում հյուրընկալվել է Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության Նորանշանակ գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին: Վերջինիս ընդունել է ՀՀ բնչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանը: «Արմենարես»-ին այս մասին հայտնեցին ՀՀ բնչական կոմիտեից:

ՀՀ բնչական կոմիտեի նախագահի տեղակալը նախ շնորհավորել է պարոն Աբեդին Վարամինին՝ գլխավոր հյուպատոսի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ և հույս հայտնել, որ նրա գործունեությունը կնպաստի Հայաստանի և Իրանի միջպետական հարաբերությունների էլ ավելի զարգացմանը:

Արսեն Այվազյանը նաև բարձր է գնահատել փոխվստահության վրա հիմնված սերտ



գործակցությունը Հայաստանում ԻԻՀ դեսպանատան և ՀՀ բնչական կոմիտեի միջև, ինչը նպաստում է տեղեկատվության փոխա-

նակման և առաջացող խնդիրների արձագանքման օպերատիվության ու արդյունավետությանը:

Պարոն Աբեդին Վարամին իր հերթին արժևորվել է Իրանի երկրների միջև բոլոր մակարդակներում առկա հարաբերությունների բարձր նշանոցը և պատրաստակամությունը հայտնել ՀՀ բնչական կոմիտեի հետ համագործակցությունն ընդլայնել նաև գլխավոր հյուպատոսության միջոցով:

Հանդիպման ընթացքում բննարկվել են բերական վարույթների շրջանակներում երկու երկրների բաղաբաղիների իրավունքների պաշտպանությունը, իրավական ոլորտում փոխադարձ օգնության առկայությունը, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրությունները կապակցությամբ այլ հարցեր: //

# Գորիսի բժշկական կենտրոնը 95 տարեկան է



**1928** թվականից գործող Գորիսի բժշկական կենտրոնը 95 տարեկան է:

Կառույցն այսօր արդեն 329 աշխատակից ունի, իսկ հիվանդներին սպասարկում են բարձր որակավորում ունեցող 70 բժիշկներ: 2010 թվականին հիմնանորոգված ԲԿ-ն հագեցվել է անընդհատ հագեցվում է ժամանակակից սարքավորումներով: Բժշկական կենտրոնն իրականացնում է հիվանդա-

նոցային, արտահիվանդանոցային և շտապ օգնության ծառայություններ: 90 մահճակալ ունեցող կառույցում գործում են.

- վիրաբուժական
  - մանկաբարձագինեկոլոգիական
  - թերապևտիկ
  - մանկական
  - ինֆեկցիոն
  - հեմոդիալիզային բաժանմունքները:
- Այստեղ իրականացվում են պլանային և անհետաձգելի վիրաբուժական, վնասված-

բարանական, ուռուցիկական, անոթային վիրաբուժական, բիրթ-կոկորդ-ականջաբանական և մանկաբարձագինեկոլոգիական միջամտություններ և լապարոսկոպիկ վիրահատություններ: Գործում է ժամանակակից սարքավորումներով հագեցված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծառայություն, որը իրականացնում է մեզի, արյան (կլինիկական, բիոքիմիական, իմունոֆերմենտային, սեռուրոգիական) և գործիքային (ուլտրաձայնային, թվային ֆլյուորոգրաֆիա, էնդոսկոպիա, էլեկտրասրտագրում) համալիր հետազոտություններ: Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ ծառայությունները մատուցվում են նաև պետական պատվերի շրջանակներում անվճար՝ Գորիսի տարածաշրջանի բոլոր բնակիչների համար, իհարկե համապատասխան բժշկական ցուցումների և բուժող բժշկի ուղեգրի ամկայության դեպքում: Իսկ կենտրոնի պոլիկլինիկայում Գորիսի և տարածաշրջանի բնակչության առողջության առաջնային պահպանմանը հետևում են համապատասխան մասնագիտացում անցած 11 ընտանեկան բժիշկներ:

«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շտապ օգնության ծառայությունն աշխատում է 24-ժամյա գրաֆիկով և իր գործի մեջ հմուտ թիմով: Վերջերս էլ այս ծառայությունը հագեցվել է Նորագույն սարքավորումներով և տրանսպորտային միջոցներով, իսկ բուժանձնակազմը վերապատրաստվել է կրթական ծրագրերով: Ի դեպ՝ շտապ օգնության կանչերն իրականացվում են անվճար՝ պետական պատվերի շրջանակներում:

Եվ ամենակարևորը. «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում սպասարկումն իրականացվում է հոգատար և պրոֆեսիոնալ աշխատակազմի կողմից: //

# «Գանձասարը» Ալեն Կարապետյանի հեթ-տրիկի շնորհիվ հաղթեց, իսկ «Սյունիքը» նվազագույն հաշվով պարտություն կրեց

Հայաստանի ֆուտբոլի առաջին խմբի առաջնության գարնանային փուլը կապանյան երկու թիմերն անցկացրին սեփական հարկի տակ: Նրանցից «Գանձասարը» աշնանային մրցաշրջանն ավարտել էր առաջնության աղյուսակի չորրորդ հորիզոնականում՝ 36 միավորով, գնդակների 36-17 տարբերությամբ: «Սյունիքը» 10-րդ հորիզոնականում էր՝ 18 միավոր, գնդակների 26-32 հարաբերությամբ:

Մարտի 3-ին «Գանձասարը» հյուրընկալեց առաջնության աղյուսակում երրորդ տեղում ընթացող Երևանի «Արարատ-Արմենիա-2» թիմին: Խաղաշրջանի մեկնարկին բնորոշ հուզմունքներ, որը հանգեցնում էր տեխնիկական խտանի, զգալի էր տալիս մանավանդ փոխանցումների ժամանակ: Կապանյան թիմը, այնուամենայնիվ, 3-0 խոշոր հաշվով հաղթեց հակառակորդին՝ շնորհիվ



Ալեն Կարապետյանի հեթ-տրիկի: Նա առաջնությունում խփած գնդակների քանակը հասցրեց 13-ի:

Մարտի 4-ին դարձյալ օրը ֆուտբոլային էր Կապանում: «Սյունիքը» «Լեռնագործ» ստադիոնում ընդունեց երկրորդ հորիզոնականում ընթացող Երևանի «Վեստ Արմենիային»: Խաղի 28-րդ րոպեին հյուրերից Կարապետյանը գրավեց «Սյունիքի» դարպասը: Մրցավարի կողմից ավելացված խաղա-

ժամանակում Գարիկ Գևորգյանի հեռահար հարվածի շնորհիվ վերականգնվեց հավասարակշռությունը, բայց երկրորդ խաղակեսի 61-րդ րոպեին Նույն Կարապետյանը մտնեց իր թիմին: Մինչև խաղավերջ «Սյունիքի» խաղացողներին չհաջողվեց փրկել հանդիպումը և ի վերջո խաղադաշտը թողեցին պարտված:

**ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

# 51 մլն եվրո Սյունիքի մարզի զարգացմանը՝ Եվրոպայից

Յունվարի 18-ին Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինը, Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ Միքիլ Գրիգորյանը, Հայաստանում Հվեդիայի Թագավորության դեսպան Պատրիկ Սվենսոնը, Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության դեսպան Անն Լույոն, Հայաստանում Գերմանիայի Դաշնային հանրապետության դեսպան Վիկտոր Ռիխտերը, Հայաստանում Լեհաստանի հանրապետության դեսպան Պավել Չեպլակը, Հայաստանում Հվեյցարիայի Համադաշնության դեսպան Լուկաս Ռոզենկրադը, Երևանում Ավստրիայի զարգացման համակարգման գրասենյակի ղեկավար Կլաուս Կապպերը, Եվրոպական ներդրումային բանկի Հարավային Կովկասում տարածաշրջանային ներկայացուցչության ղեկավար Մաշիեյ Չուրան, Եվրոպական հանձնաժողովի Հարևանության և ընդլայնման հարցերով գլխավոր տնօրինության Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի և Արևելյան գործընկերության բաժնի ղեկավար Դեյվիդ Քալդերը հայտարարեցին «Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա նախաձեռնության» պաշտոնական մեկնարկի մասին:

«Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա նախաձեռնությունը» Եվրոպական միության, Եվրոպական ներդրումային բանկի, ԵՄ անդամ երկրների՝ Ավստրիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լեհաստանի, Հվեդիայի, ինչպես նաև գործընկեր հանդիսացող Հվեյցարիայի համատեղ նախաձեռնությունն է:

«Եվրոպական միությունը հանձնառություն է ստանձնել Հայաստանի կառավարության հետ համատեղ աշխատանքի միջոցով նպաստել առավել կարիքի մեջ գտնվող մարզերի զարգացմանը: Մենք գոհունակությամբ ենք արձանագրում, որ Եվրոպական միությունը, ԵՄ անդամ պետություններից՝ Ավստրիան, Ֆրանսիան, Գերմանիան, Լեհաստանը և Հվեդիան, ինչպես նաև Հվեյցարիան և Եվրոպական ներդրումային բանկը մեկտեղել են իրենց ջանքերը հանուն Սյունիքում փոխակերպող ազդեցության», – իր խոսքում ընդգծել է դեսպան Վիկտորինը:

«Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա նախաձեռնությունը» համահունչ է ՀՀ Կառավարության կողմից սահմանված՝ Սյունիքի մարզի զարգացման, ինչպես նաև՝ ԵՄ Տնտեսական և ներդրումային պլանի շրջանակում Հայաստանի հարավային մարզերի դիմակայունության վերաբերյալ ուղեշային ծրագրի առաջնահերթություններին: Նախաձեռնության հիմնական նպատակն է նպաստել Սյունիքի մարզի կայուն սոցիալ-տնտեսական և ինտիտուցիոնալ զարգացմանը, մասնավորապես նպաստելով՝

- միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄԶ) համար գործարար միջավայրի բարելավմանը և մասնավոր հատվածի մրցունակության բարձրացմանը,
- բաղաբաղակալից և որակյալ հանրային ծառայությունների հասանելիության ընդլայնմանը,
- տարածքային «կանաչ» զարգացման մոտեցումների կիրառմանը և կենսաբազմազանության պահպանությանը, կայուն օգտագործմանն ու վերականգնմանը:

«Ցանկանում են շնորհակալություն հայտնել Եվրոպական միությանն ու ԵՄ անդամ պետություններին Հայաստանի համար մարտահրավերներով լի այս բարդ շրջանում հատկապես Սյունիքում իրականացվող բոլոր ծրագրերի և ներդրված ջանքերի համար: Սյունիքն իրապես կենսական նշանակություն ունի մեր երկրի համար, ուստի մարզի կայուն զարգացմանը միտված ցանկացած ծրագիր գտնվում է Կառավարության հատուկ ուշադրության կենտրոնում: Ավելին, ընթացիկ աշխարհաբաղաբալկան զարգացումներն էլ ավելի են ընդգծում Սյունիքի ռազմավարական դերը, այդ թվում՝ տարածաշրջանում կայուն խաղաղության կերտման ճանապարհին», – իր ելույթում նշել է փոխվարչապետ Միքիլ Գրիգորյանը:

«Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա նախաձեռնություն» սկզբնական օրվա առաջիկա 5 տարիների համար կազմում է շուրջ 51 մլն. եվրո. այն կարող է հետագայում ավելա-



նա, քանի որ նախաձեռնությունը ճկուն մեխանիզմ է և բաց է ԵՄ անդամ պետությունների համար՝ միանալու և իրականացնելու Սյունիքի մարզի զարգացմանն ուղղված նոր նախաձեռնություններ:

«Մեկ միասնական Եվրոպական ծայրով հանդես գալով՝ «Թիմ Եվրոպա» մոտեցումը գործընկերության և միաբանության վերաբերյալ հստակ ուղի է ուղարկում՝ աշխատելու միասին կառուցելու կանաչ, արդար, կայուն և ներառական հասարակություններ՝ ուշադրության կենտրոնում պահելով մարզային զարգացման կարիքները: «Թիմ Եվրոպա» նախաձեռնությունները, Եվրոպական միության Նոր «Գլոբալ դարպաս» նախաձեռնության և Տնտեսական և ներդրումային պլանի հետ միասին ԵՄ երկարաժամկետ արձագանքն են հարավային աշխարհաբաղաբալկան իրողություններին, երբ նոր մարտահրավերների լուծումները պահանջում են ջանքերի մեկտեղում և համատեղ գործողություններ», – իր ելույթում ընդգծել է Եվրոպական հանձնաժողովի Հարևանության և ընդլայնման հարցերով գլխավոր տնօրինության Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի և Արևելյան գործընկերության բաժնի ղեկավար Դեյվիդ Քալդերը:

«Դիմակայուն Սյունիք Թիմ Եվրոպա նախաձեռնության» մեկնարկի միջոցառման ավարտին ստորագրվեցին նախաձեռնության շրջանակում իրականացվելիք երկու ծրագրերի պայմանագրեր:

«Սյունիքի վերականգնման, դիմակայունության և զարգացման ծրագիրը» համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության կողմից, ու իրականացվում Ավստրիական զարգացման գործակալության կողմից: 11 միլիոն եվրո բյուջե ունեցող ծրագրի նպատակն է Սյունիքում նպաստել միկրո, փոքր և միջին բիզնեսների մրցունակության բարձրացմանը և օժանդակություն տրամադրել համայնքային փոքր ենթակառուցվածքների վերականգնման համար: 60 ամիս տևողությամբ այս ծրագրի իրականացումը մեկնարկում է 2023թ. հունվարին:

«Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում, «Մարդը կարիքի մեջ», «Կարիտաս Հայաստան» և «Վինետե Հայաստան» հասարակական կազմակերպությունների կողմից: 1.6 միլիոն եվրո բյուջե ունեցող ծրագրի նպատակն է նպաստել բաղաբաղակալից հասարակության կազմակերպությունների և համայնքային իշխանությունների միջև արդյունավետ համագործակցության միջոցով Սյունիքի մարզում կայուն ֆինանսավորման մոդելներ կիրառող համայնքաին սոցիալական ծառայությունների ներդրմանը: 36 ամիս տևողությամբ այս ծրագրի իրականացումը մեկնարկում է 2023 թ. փետրվարին:

EEAS.EUROPA.EU, 19.01.2023

# Հավելավճարներ կտրամադրվեն գյուղական մինչև հարյուր աշակերտ ունեցող դպրոցների ուսուցիչներին

Ուսուցիչների վարձատրության բարելավման, ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացման քաղաքականության շրջանակում 2023 թ. պետական բյուջեով նախատեսված են մի քանի նոր նախաձեռնություններ: Մասնավորապես՝ 2023 թվականի սեպտեմբերից հավելավճարներ կտրամադրվեն գյուղական մինչև հարյուր աշակերտ ունեցող դպրոցների շուրջ 4418 ուսուցիչներին:



Նպատակ ունենալով խրախուսել նոր ուսուցիչների մուտքը դպրոցներ և լրացնել առկա թափուր տեղերը՝ 2023 թվականի սեպտեմբերից հանրապետության բոլոր դպրոցների բնագիտական առարկաներ դասավանդող շուրջ 8135 ուսուցիչներին նույնպես կտրամադրվի հավելավճար:

Վերանայվել է բազմաժամկետ դասարանների ձևավորման սկզբունքը, որով փոքր դպրոցներում յուրաքանչյուր երեխայի համար կապահովվի լիարժեք դասաժամ բոլոր առարկաների ուսուցման համար: Բազմաժամկետ դասարան կձևավորվի

միայն արվեստի և ֆիզկուլտուրայի ժամերին: Բազմաժամկետ դասարաններում դասավանդող ուսուցիչները կստանան 50-75% հավելավճար՝ մեկ ժամի համար: Ծրագրի մեկնարկը նախատեսվում է սեպտեմբերի Սյունիքի մարզի դպրոցներում:

ARMENIA - KAPAN | IRAN - TABRIZ

## Թավրիզի իսլամական արվեստի համալսարանի ուսանողների և արվեստագետների ձեռքի աշխատանքների ցուցահանդես

گالری هنرستان صنایع دستی دانشگاه تبریز

هنرمندان تبریز

۲۶ اسفند ۱۴۰۱ الی ۱ فروردین ۱۴۰۲

Հացե՛ք Սյունիքի մարզ, Կապան, Չարենցի փող, 2 մասնաշենք, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ»

Մարտի 17-ից Մարտի 21-ը

Ցուցահանդեսի ժամերը՝ 12:00 - 20:00

14.01.2023



# Բացվում են թանգարանի պատմության հիշարժան էջերը

Մարտի 4-ին Ակսել Բակունցի տուն-թանգարանում տեղի ունեցավ թանգարանի պատմության կարևոր էջերի, առանձին դրվագների լուսաբանմանը նվիրված արխիվային նյութերի ցուցադրություն, որն ուղեկցվեց բանախոսությամբ: Հանդիպմանը ներկա էին գրողներ, մտավորականներ, մանկավարժներ:

Թանգարանի գիտաշխատող, բ.գ.թ., դոցենտ Թեմինա Մարությանը խոսեց երկու թեմայի շուրջ՝ «Ակսել Բակունցի տուն-թանգարանի բացման հանդիսությունը և Հայաստանի Սիրասը», «Հայկ Դանդախյանը և նրա արժեքավոր նվիրատվությունները թանգարանին»՝ ներկայացնելով արխիվային հետաքրքիր նյութեր և լուսանկարներ:

1970 թվականի սեպտեմբերի 16-ին Գորիսում հանդիսավորությամբ բացվեց Ակսել Բակունցի տուն-թանգարանը: Թանգարանի բացման առիթով Երևանից ժամանած գրողների պատվիրակությունը գլխավորում էր արձակագիր Հայկ Սիրասը, որ 1930-ականներին մահացու զրպարտություններ էր ստորագրել Բակունցի և նրա գրական ընկերների դեմ: Իր անցյալի սև էջը բողբոջելու համար Սիրասը, որ ժամանակին դազանակը ձեռքին գրել էր սովորեցնում Բակունցին, փորձեց բոլոր հնարավոր միջոցներով ինքնահաստատվել նրա գրական լուսապատկերի շուրջ՝ որպես հուշագիր՝ բարեկամի կեղծ դիմակով, որպես հատուկ առաքելությամբ Գորիս գործուղված խորհրդային գրող՝ զրջակից ընկերոջ կեղծ դիմակով: «Եվ ինչու՞ էր Սիրասին թվում, թե իր կյանքի այդ



էջը փակված է, իր գրական հեղինակությունը՝ փրկված, փրկված նախ՝ Բակունցի մաքրագործված փառքով», - նշեց բանախոսը: Թանգարանի արխիվային հավաքածուներում պահպանվում են Սիրասի մեթենագիր ելույթը, որա ձեռագիր քաղվածքը, որը ցանկացել է գետեղված տեսնել ցուցափեղկում, նամակները՝ ուղղված թանգարանի հիմնադիր տնօրեն Քաջիկ Միքայելյանին, գրառումը հուշամատյանում՝ թանգարանի բացման առթիվ և այլ ուշագրավ վավերագրեր, որոնք լույս են սփռում Սիրասի մարդկային նկարագրի վրա:

# ՀԳՄ նախագահության մրցանակ Դավիթ Միքայելյանին՝ «Հայացք ձմեռնամուտի» գրքի համար (Արցախ)

Բանաստեղծ Դավիթ Միքայելյանը «Հայացք ձմեռնամուտի» ժողովածուի մեջ ամփոփել է արցախյան երեք պատերազմների ժամանակ վերապրած իր զգացումներն ու ապրումները, փորձել ընկալել դաժան փորձությունների միջոցով անցած մարդկանց ճակատագրերը, նրանց ըմբոստ ոգին, անգամ ողբերգական իրավիճակներում՝ չհուսահատվելու, լույսի շող որոնելու, հայրենի հողը պաշտպանելու և արմատներին հավերժ կառչած մնալու, այն երբեք չլքելու, շենացնելու և գորացնելու կամքի ուժը: Գրքում տեղ են գտել նաև վերջին տարիներին հեղինակի կողմից տարբեր թեմաներով գրված քնարական ստեղծագործությունները:

1997-ին Դ. Միքայելյանը կրկին աշխատանքի է անցել «Ազատ Արցախ» թերթի խմբագրությունում՝ նախ բաժնի վարիչ, ապա թերթի պատասխանատու քարտուղար: 1998-2008 թթ. հանդիսացել է ԼՂԻ կառավարության մամուլի ծառայության պետը, 2008-2011 թթ.՝ ԼՂԻ գրողների միության քարտուղարն ու «Պըլը-Պուլի» երգիծական հանդեսի գլխավոր խմբագիրը: 2012-2017 թթ. խմբագրել է նաև «Հայրենիք» թերթը: Այժմ նա Ստեփանակերտի բաղադրատարանի մամուլի քարտուղարն է, միաժամանակ հանդիսանում է «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի սեփական թղթակից Արցախում: ՀՀ և ԼՂԻ գրողների միության, ինչպես նաև Արցախի ժուռնալիստների միության անդամ է: Հրատարակել է բանաստեղծությունների չորս ժողովածու, «Լուսածրոցի Մուքին կատակում է» երգիծական պատմվածքների ժողովածուն, որը հետագայում վերածվել է պիեսի, «Հոգևոր թեմի վերածնունդն Արցախում» գիրքը՝ նվիրված բրիտանացիներին Հայաստանում պետական կրոն հաստատվելու 1700-ամյակին: Լույս է ընծայվել նաև «Բոլորովին հոգի, բոլորովին սեր» գիրքը՝ Մուրացանի ծննդյան 150-ամյակի կապակցությամբ: 2004թ. հրատարակվել է Դ. Միքայելյանի



«Լույսը պահպանել» բանաստեղծությունների և արձակ գործերի, իսկ 2008-ին՝ «Ծաղկել է ձորի խնձորենին» էսսեների, ակնարկների և ճամփորդական նոթերի ժողովածուն: 2011 թ. տպագրվել է «Մարիամը զարմանում է» մանկական բանաստեղծությունների գիրքը, 2012-ին՝ «Փարվեմ բայելուն, որ չմրսի» բանաստեղծությունների ընտրանին: 2013-ին լույս է տեսել նրա «Ինքնամաքառման և ինքնահաստատման տարիներ» (արձակ) ժողովածուն՝ նվիրված Արցախյան ազգային-ազատագրական շարժման 25-ամյակին: 2017 թ. հրատարակվել է «Խորհրդավոր ժամադրություն» երգիծական պատմվածքների ժողովածուն: 1999 թ. արժանացել է ԼՂԻ ԱԺ կողմից հայտարարված՝ «Ազատ Արցախ» հանրապետական թերթի հատուկ և ԼՂԻ կառավարության (1999 թ.) Եղիշեի անվան պետական մրցանակին՝ Արցախյան պատերազմում նահատակված հայորդիների հիշատակին նվիրված երգերի շարքի համար:



2008 թ. ԼՂԻ նախագահի հրամանագրով, գրականությանը մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով: 2013 թ. արժանացել է «ԼՂԻ վաստակավոր լրագրող»-ի կոչմանը: \* \* \*

«Այունյաց երկիր» խմբագրակազմը շնորհավորում է իր վաղեմի բարեկամ և հայոց Արցախի նվիրյալ Դավիթ Միքայելյանին՝ ՀԳՄ նախագահության մրցանակին արժանանալու համար, մաղթում դարաբաշյան ամուր առողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

## Դավիթ Միքայելյանի մասին

ՍԱԿ ԱՐՇՈՒՄԱՆՅԱՆ  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս  
Դավիթ Միքայելյանի պոետական աշխարհը հայրենի Արցախն է, նրա



# Կենսաթոշակային տարիքում հնարավոր կլինի աշխատել. օրենսգիրքը կփոփոխվի

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նախատեսում է լայնածավալ փոփոխություններ իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքում: Նախագիծն արդեն հավանության է արժանացել կառավարությունում, առաջիկայում կքննարկվի Ազգային ժողովում: Գործատու-աշխատող հարաբերությունները կարգավորող փաստաթուղթը, հեղինակների խոսքով, 2015-ից հետո առաջին անգամ լուրջ խմբագրման է ենթարկվում. առաջարկվում է փոխել կամ լրացնել հողավածների գրեթե կեսը: Ինչպես են փոխվելու գործատու-աշխատող հարաբերությունները, և այդ փոփոխություններն ու՞մ աշխատանքային կյանքն են առավել հեշտացնելու:

Կառավարությունը հավանություն է տվել Աշխատանքային օրենսգրքի 266 հոդվածներից 122-ում փոփոխություններ առաջարկող նախագիծին: **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանն** ասում է, որ 2015-ից լուրջ փոփոխության չենթարկված օրենսգիրքը չէր բավարարում աշխատանքային հարաբերությունների ժամանակակից մոդելին: Առաջարկները վերաբերում են աշխատողների, գործատուների, երեխա աշխատողների, երեխա ունեցող կին աշխատողների, թոշակառուների, այսինքն՝ աշխատանքային հարաբերություններում ներգրավված գրեթե բոլոր անձանց գործունեությանը:

«Գործող օրենսգրքի 113-րդ հոդվածում որպես աշխատանքային պայմանագրերի լուծման հիմք նախատեսված է նաև կենսաթոշակային տարիքին հասնելը: Նախագծով նախատեսում ենք այդ հիմքն ընդհանրապես հանել: Դա ևս մեկ երաշխիք կլինի կենսաթոշակային տարիքի քաղաքացու համար, որ շարունակի աշխատել»:

Միաժամանակ հստակեցվում են կենսաթոշակային տարիքում գտնվող աշխատող-

ների հետ աշխատանքային պայմանագիր կնքելու կարգավորումները: Ըստ գործող օրենսգրքի՝ գործատուն չի կարող կենսաթոշակառուին աշխատանքի ընդունել անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրով: Փոփոխություններով առաջարկվում է գործատուին տալ այդ իրավունքը:

Մեկ այլ փոփոխությամբ էլ հավելյալ երաշխիքներ են սահմանվում զինհաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամների, ռազմական գործողությունների հետևանքով անհետ կորած ճանաչված կամ զոհված զինծառայողների ընտանիքիների անդամների համար: «Եթե տեղի է ունենում աշխատողների քանակի կամ հաստիքների կրճատում, ապա իրենց համար նախատեսվում է արտոնություն: Այսինքն՝ եթե երկու աշխատող հավասար պայմաններում են, ապա իմ նշած թիրախային խմբին տրվելու է արտոնություն, ու նրանք շարունակելու են աշխատել»:

Աշխատանքային պայմաններն ավելի հարմար պետք է լինեն նաև մանկահասակ երեխա ունեցող կանանց համար: Եթե այժմ աշխատանքային ժամերն ավելի կարճ են մինչև 1 տարեկան երեխա ունեցող կանանց համար, ապա նախագիծը ընդունման դեպքում կրճատված ժամաբանակով են աշխատելու նաև մինչև 2 տարեկան երեխա ունեցողները: Այս խմբի համար մեկ այլ փոփոխություն ևս կա:

«Նախատեսված է մինչև 1.5 տարեկան երեխա խնամող կանանց համար 3 ժամը մեկ սահմանել կենսաթոշակային տարիքին հասնելուց: Այս փոփոխության դեպքում մինչև երկու տարեկան երեխա ունեցողների համար նույն սկզբունքն ենք պահպանում: Նաև ապահովվում է ճկունությունը. այդ ընդմիջումները կարող են կանանց ցանկությանը տեղափոխվել կամ միավորվել: Այսինքն՝ կամ ուշ գալ աշխատանքի, կամ շուտ գնալ աշ-

խատանքի: Կատարելով, որ դա կօգնի կանանց երեխաներին խնամելու գործում»:

Արձակուրդի տրամադրման կարգում ևս փոփոխություններ են նախատեսվում: Գործող օրենսգրքում աշխատողը կարող է արձակուրդ ստանալու դիմում ներկայացնել, եթե ընկերությունում աշխատում է 6 ամիս և ավելի: Նախատեսվում է չեղարկել այս ժամկետը և գործատուի համաձայնության դեպքում աշխատողին արձակուրդ տրամադրել ցանկացած ժամանակ: Արձակուրդներին վերաբերող մեկ այլ դրույթ ևս՝ աշխատողը պետք է արձակուրդ գնա, եթե նույնիսկ չի ցանկանում: Փոխնախարարն է մանրամասնում. «Եթե աշխատողը չի ներկայացնում դիմում ու աշխատանքից վերականգնվելու ժամանակ չի ունենում, դա ազդում է նաև գործի արդյունավետության վրա: Այդ պատճառով գործատուին հնարավորություն ենք տալիս, որ եթե աշխատողը 2.5 տարվա ընթացքում չի ներկայացնում արձակուրդ գնալու դիմում, ապա գործատուն իրավունք ունի իր ցանկությանը որոշելու, թե երբ է գնալու արձակուրդ»:

Նախագիծը ընդունման դեպքում Աշխատանքային օրենսգրքի «բառապաշարում» նոր տերմին կհայտնվի՝ ուսումնական արձակուրդ: Նախարարությունում կարծում են, որ հաճախ գործատուն դեմ չէ, որ աշխատողը գնա այդ երկիր կրթություն ստանալու կամ վերապատրաստումներ անցնելու, սակայն այդ հարաբերությունները կարգավորված չեն:

«Այս պահի դրությամբ հարկադրված են դադարեցնել հարաբերությունները, բայց իրականում գործատուները ցանկանում են պահել դրանք: Մինչև երկու տարի արձակուրդի հնարավորություն կտրվի»:

Սա չվճարվող արձակուրդ է լինելու: Պարզապես աշխատակիցը կատարել է ինչևէ, որ ուսումնառության ավարտից հետո իր աշխատատեղը կպահպանվի: Օրենսգրքում այլ փոփոխություններ ևս ներառված են: Դրանք վերաբերում են երեխաների աշխատանքային իրավունքին, աշխատանքից ազատելու հիմքերին, արտասովոր աշխատանքի վճարման կարգին և այլն:

Փոփոխություններն արժանացել են կառավարության հավանությանը, առջևում խորհրդարանական լսումների և Ազգային ժողովում քննարկումների փուլերն են:

# Խոսք ընկերոջս՝ Կամո Մովսիսյանի հոբելյանի առթիվ

Սկզբը՝ էջ 4

յան մեջ շերմային, ֆիզիկամեխանիկական և այլ հատկություններով օժտված նոր բաղադրության սոսնձի ներդրված գիտաարտադրական նորարարական աշխատանք, որն ամրագրված է ԽՆԱՄ հեղինակային իրավունքով:

Ընդգրկուն է եղել նաև Կ. Յ. Մովսիսյանի հասարակական գործունեությունը: 1988-1992թթ. կատարել է «Գիտելիք» ընկերության Գործիչ շրջանային կազմակերպության վարչության պատասխանատու քարտուղարի պարտականությունները: 1995-2000 թթ. հրավիրվել է դասավանդելու դպրոց-վարժարանում, մի քանի տարի եղել է մարզային օլիմպիադայի ֆիզիկայի բաժանմունքի նախագահ: Նրա գործունեությունը գնահատվել է ՀԼԿԵՄ Կենտկոմի, «Գիտելիք» ընկերության հանրապետական խորհրդի, ՀՀ կրթության և գիտության նախարարության պատվոգրերով, ՀՀԳԳՏ գովասանագրով (30-ամյակ, 1997 թ.), ԵրԴԻ-ՀԴՃՀ-ի վաստակագրով (70-ամյակ, 2003 թ.):

Բայց նրա մեծագույն վաստակն սասներն ու բազմաթիվ շրջանավարտներն են, ովքեր պարբերաբար լրացնում և ճանաչում են գտնում ինչպես հանրակրթական դպրոցներում, բուհերում, գիտահետազոտական հաստատություններում, այնպես էլ՝ ժողովուրդային տարբեր բնագավառներում:

75 տարին գիտական մանկավարժի համար փորձն ու գիտելիքներն իմաստաբար փոխանցելու ժամանակաշրջան է: Մովսիսյան գիտականի ստեղծագործական որոնումները շարունակվում են նաև այսօր: Մեծ եռանդով ձեռնամուխ է եղել նոր գործի՝ օգնել Գործի բազմաթիվ ու շրջանի գյուղերի դպրոցներին՝ բարձրացնելու իր սիրած ֆիզիկա առարկայի հեղինակությունն ու դասավանդման որակը:

Շնորհավորելով ընկերոջս հոբելյանի առթիվ, ցանկանալով նրան առողջություն և հաջողություններ ընտանիքում, իր սիրած գործում, պիտի նաև ասեն.

- Պինդ կաց և ամուր. դա շմտ-շմտ է պետք մեր հասարակությանը...

ԳԱԳԻԿ ՀԱՅՐՈՒՄՅԱՆ

Նախասիրությունների և մտահոգումների կենտրոնում՝ մատուցելու պես խնկարկվող, մամուլակալած ու հազարակնճիռ շահ թթեխին, հարագատ ծննդավայրը՝ «շուրթերին արծաթ մի գետակ», ջրաղացն ու թոնրատունը, պապենական կաթնաղբյուրը, Հովհաննես պապի պատվաստած ծառերը և այս ամենին շունչ ու ոգի ներարկող Արցախ աշխարհի աշխատավորը: Անկեղծ զգացումներ կան նրա քնարական նվագներում, բանաստեղծական խոհերը տաք ապրումների թանաքացումներ են, իսկ երգերի մեջ՝ Դավիթն ուղղակի վարպետության է հասնում...

## ՎԱՐՆԱ ԶԱԿՌՅԱՆ Արցախի ԳՄ նախագահ

Դավիթը... նա երբեք չի ձևանում, գրում է՝ երբ պիտի գրի, կատակում է՝ երբ պիտի կատակի, երգում է՝ երբ պիտի երգի, երաժշտություն է հորինում՝ երբ պիտի հորինի... Իսկ այդ «երբ»-ի սահմանադիրն ինքն է: Դավիթը բնավորություն է, այն էլ՝ ընդգծված, խոսքը համ ունի, հոտ ունի, գործը սրտով է կատարում: Նա երգի տողի մեջ հոգի է դնում...

## ԲՈՂՐԱՆ ՉԱՆՅԱՆ

Դավիթ Միքայելյանը, ով իր երկրամասի երգիչն է, իր երգերի մեջ նույն հավատավոր արցախցին է: Լուսապաշտություն և արևապաշտություն կա նրա ստեղծագործություններում, որով և մտնում են բանաստեղծի աշխարհը: Այդ երգերը տարբեր հոգեվիճակներ, տրամադրություն և զգացմունքներ են արտահայտում, որոնք և՛ ապրված են, և՛ չեղած են ու անմիջական: Դավիթ Միքայելյան բանաստեղծի գրական հերկը խոստումնալից է, արտը՝ առողջ. լիքը

հասկերով է առատ, և հողն էլ բարեբեր է:

## ՉԱՔԱՐ ԵԵՇԻՇՅԱՆ Երաժիշտ, երգահան, խմբավար / Բեյրութ

Սիրելի Դավիթ, հեռավոր Լիբանանում ինձ համար անսահման ուրախություն է իմանալ, որ Արցախում քո հեղինակությամբ նոր երգեր են ծնվում:

Շատ եմ ցավում, հնարավորություն չունեցա անձամբ ներկա գտնվել քո հեղինակային երեկոյին: Սակայն մտովի չեմ կարող չլինելու այն ամենը, ինչ տեղի է ունենում Արցախ աշխարհում՝ մանավանդ մշակույթի ու կրթության բնագավառում: Քո նկատմամբ ունեցած իմ հարգանքն ավելի թանձրացավ, երբ վայելեցի քո ստեղծագործությունները, քո անուշ երգերը: Ինձ բաշե հայտնի է քո ներդրումը հերոսական Արցախի կյանքին և մանավանդ գրական ժառանգության մեջ: Ի սրտե միանում եմ քո տեքստերով «Վարանդայի» իմ սաների (այս անգամ իմ բացակայությամբ) ինչեցրած երգերին և իմ շնորհավորանքի ու սիրո ուղերձն եմ հղում՝ մաղթելով նորանոր նվաճումներ, ամենայն լավն ու բարին:

## ՌՈՒԲԵՆ ԵՍԱՅԱՆ

Դավիթ Միքայելյանի ստեղծագործությունների հավատի ժամը հուշում է, որ երգը, նվագը, բառը զարդարանք չեն: Ներշնչանքը հեղինակին տանում է այնտեղ, որտեղ մայրանում է ծիածանը շահ թթեխու ճյուղերն ի վար, և հոգեպարար, զուլալ երգն է ծնվում հոգուց: Նրա տողերում երաժշտության ելեշնչերով հարություն առնող ոգին լուսավորում է Արցախյան գոյամարտի նահատակների ճանապարհը՝ բառ առ բառ ամբողջացնելով պայքարի իմաստը, որ հավատի մի հյուլ է՝ լեռան շուրթին:

# Առանց բարձրագույն կրթության ու մանկավարժի որակավորման՝ ուսուցիչները սեպտեմբերից դպրոցում չեն աշխատի

Դա «Հանրակրթության մասին» օրենքի պահանջ է: Ամրագրված վերջնաժամկետը նախկինում մի քանի անգամ երկարաձգվել է: Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությունում ասում են՝ այլևս ժամկետի փոփոխություն չի նախատեսվում:

## ՍՊՏԵՆ ԲԱՂՎԱՍԱՐՅԱՆ (ՀՀ ԳԳՄՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԵՏ)

«Հանրակրթության մասին» օրենքը ընդունելուց հետո առավել քան ողջամիտ ժամկետ կար, որպեսզի այն անձը, որ չի համապատասխանում ուսուցչի որակավորմանը, կարողանար այս տարիների ընթացքում (14 տարի է անցել) ապահովել այդ կրթությունը: Եթե մենք անընդհատ երկարաձգում ենք անցումային դրույթներով ժամկետները, ըստ էության՝ ստացվում է, որ օրենքը կիրառելի չէ այդ անձանց նկատմամբ, ինչը տրամաբանական չէ: Գիտե՞ք՝ բարեփոխումների մեծ գործընթաց է գնում, և ուսուցման որակին շատ մեծ ուշադրություն է դարձվում: Նաև շատ կարևոր է, որ ունենանք մանկավարժի որակավորմամբ մասնագետներ:

Մոտ 40 հազար ուսուցիչի 1 414-ը չունի բարձրագույն կրթություն: 1 350-ի կրթությունը միջին մասնագիտական է, 64-ինը՝ միջնակարգ: Ոլորտի պատասխանատուներն այսօր թափուր հաստիք առաջանալու դեպքում ճզմաժամ չեն կանխատեսում, թեպետ որոշակի՝ ոչ սուր արտահայտված խնդիրները չեն բացառում:

ՍՊՏԵՆ ԲԱՂՎԱՍԱՐՅԱՆ - Այն ժամերը, որոնք տվյալ անձինք էին պարապում, կամ կվերաբաշխվեն այլ մասնագետների վրա, կամ մրցույթներ կհայտարարվեն և համատեղության կարգով կլինեն, նաև «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություն կատարվեց, և այն մասնագետները, որոնք տվյալ առարկայի մասնագետ են, բայց ուսուցչի որակավորում չունեն

են, կարող են 30 կրեդիտ հավաքել, որը իրենց տալիս է անհրաժեշտ հմտությունը մանկավարժ աշխատելու համար, և իրենք նույնպես մասնակցեն թափուր տեղի մրցույթին:

Գեղարքունիքի մարզում Չոլաբարի համար 2 դպրոցում աշխատող 47 ուսուցիչից 6-ը միջին մասնագիտական կրթություն ունի՝ 3 դասվար և մեկական տեխնոլոգիայի, կերպարվեստի ու ֆիզկուլտուրայի ուսուցիչ: Տևորեն ասում է՝ նրանք հիմնականում միջինից բարձր տարիքի են:

## ՎԱՌԵՆ ՄԵԼԻՅԱՆ (ԳԵՂԱՐՔՈՒԹՅԱՆ ՄԱՐԶՈՒՄ ՉՈՒՆԱՔԱՆԻ ԱՎԱՐԴ ՎԱՐՆԱՅԱՆ ԱՆՎԱՆ ՀԱՄԱՐ 2 ԴՊՐՈՑԻ ՏՆՈՐԵՆ)

- Քանի որ սահմանի հետաձգումը անընդհատ եղավ, հնարավորություն կտան ևս մի քանի տարի աշխատելու, նաև հարցի լուծումը չպատկերացնելով, կարծում են, որ մնացին, որովհետև մեկ-երկու անգամ հնարավորություն տրվեց հետաձգելու, որպեսզի ստանան բարձրագույն կրթություն: Երբ խոսում են իրենց հետ, մտածում էին, որ ևս մի քանի տարի հնարավորություն կտրվի, գոնե մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը, աշխատելու: Հիմնական պատճառաբանությունը դա են բերում:

Տևորեն ասում է՝ օգոստոսին, երբ լրանա վերջնաժամկետը, միանշանակ առաջնորդվելու են օրենքով, բայց հատկապես գյուղական համայնքները մասնագետի պակաս կունենան, որովհետև միանգամից 6 ուսուցչի փոխարեն բարձրագույն կրթությամբ մանկավարժների հեշտությամբ չեն գտնելու:

Նախորդ տարիներին Չոլաբարի համար 2 դպրոցի մեկ ուսուցիչ բարձրագույն կրթություն է ստացել, ևս մեկն էլ բուհը կավարտի այս տարի ու աշխատանքը շարունակելու հնարավորությունից չի զրկվի:

